

# Բ Ի Ի Ր Ա Կ Ն

## Լ Ր Ա Պ Ի Ր

Ազգագրական, Բանասիրական, Լեզուաբանական և Գրական

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ԱՄԷՆ ԵՐԵՎԱՆԻ

ԲԱԺԱՆՈՐԻԱԳՐՈՒԹԻՒՆ  
Պատաներ ու Պարս Տարեկան 50 Դրուշ  
՝ ՝ ՝ վեցամսեայ 30  
Օտար Երկիրներ [6 Բուլլի] 15 Չրան

Հ Ա Ս Յ Է  
در سعادتده اسکی صلیبه جاده سنه. نشان بریریان  
صلیبه سنه «پورانغن» غزه تاسی اداره سنه  
ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆ ԲԻԻՐԱԿՆԻ  
Կ. Պարս. Էսկի Զապրիէ բիւ 61  
Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Տպարան

### ԴԱԻԹԵԱՆ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ ՊԻՏԻ ՓՈՒԱԴՐՈՒԻ

Նոյեմբեր 20ին  
Սիրհեճի կողմը, նորակառոյց  
**ԽՈՐԱՍԱՆՃԻ ԽԱՆ**

Ուսուցչութիւնը ընել մեր նոր հասցէին.

در سعادتده سرکه جیده خوراسانجی خاننده  
سمباط داودیان

SIMPAT DAVIDIAN  
28, 29, 30, Khorassandji han  
Sirhédji, Stamboul

### Հ Ա Ս Կ Ա Փ Ա Ղ

Ս մեզնեան աւելի ի՞նչ կը պակսի. —  
Զարմանալի պիտի թուի անշուշտ ինչ  
որ պիտի ըսենք. Որքան զարմանալի  
այնքան ալ ցաւալի. բայց ճամարիտ է  
թէ մեր կրթական շրջանակին մէջ, կա-

րեւոր պակասն է ամէնէն աւելի. . .  
հայ լեզուի ուսուցիչը: Այո՛, այնքան  
արհամարհուած, այնքան անտեսուած է  
(աւանդական բացատրութեամբ) հայկա-  
բան դասասուի պաշտօնն ու արտօնը  
որ այսօր ճշտիւ մեզի պիտանի եղող այդ  
դասակարգը ա՛լ գոյութիւն չունի  
կրնանք ըսել: Ուսուցիչներու սով չկայ,  
ո՛չ. այլ հայերէնի ուսուցիչ չկայ: Աջ ու  
ձախ պիտի տեսնէք ֆրանսերէնի, աշ-  
խարհագրութեան, թուաբանութեան,  
եւլն եւլն ճիւղերու ուսուցիչներ, կամ  
դաստիարակ-ուսուցիչներ որոնք քիչէն  
չատէն այդ դասերը կ'աւանդեն՝ մէկը  
տարրական դասընթացքին, միւսը միջի-  
նին կամ բարձրագոյնին մէջ, ու ատ  
դասերուն հետ նաեւ հայերէնն ալ.  
Բայց դիտե՛ք որ ամէնէն անխնամ ամէ-  
նէն հարեւանցի աւանդուածն է հայ  
լեզուն, վասն զի 1. Հայ լեզուի հմուտ  
ուսուցիչն է որ մեր մէջ հազուադիւտ է,  
2. վասն զի դաստիարակ-ուսուցիչին  
որ ի պարտականութենէ, de profession,  
այդ ճիւղն ալ ուսուցանել կոչուած է,  
ամենէն անհոգ ու անտարբեր կերպով  
աւանդած ճիւղը մայրենի լեզուն է:  
Եւ 3. վասնզի մենք ալ, ժողովուրդն

ալ, մոռնալ կը թուի թէ մեր տղոց համար անհրաժեշտը՝ ամէն բանէ առաջ՝ մայրենի լեզուն է թէ՛ անոր խնամով աւանդուելը մեզի համար պարտաւորիչ ու հարկեցուցիչ է նախ իբրեւ հայ, եւ ապա իբրեւ միջոց՝ հոգեւոր եւ իմացական ամէն հիմնաւոր ու բանաւոր զարգացումի :

Կը խնդրենք, այս ցուրտ յայտնութիւնը ընելնուս համար ներողամիտ թող ըլլան մեր պատուարժան դաստ. ուսուցիչներն ու վարժուհիները, որոնց մենք միշտ համակիր ու բարեկամ ենք սըրտով ալ, արուեստով ալ :

Ու ճիշտ այս բարեկամութեան շնորհիւ է որ վերահասու եղած ենք այս դառն իրողութեան : Տասնեակ տարիներէ ի վեր վարելով Ուսուցչական Գործակալութիւնը, առիթ ունեցած ենք անձամբ կամ գրով առնչութիւն ունենալու ուսուցիչ դասակարգին հետ, ու դիտած ենք որ ամենէն աւելի հայերէնի ծիւղին համար է որ անտարբեր կը գտնուին : Երբ ուսուցիչ մը կը ներկայանայ արձանագրուելու, կը հարցնենք՝ անուէն մականուէն վերջ՝ թէ ի՞նչ ծիւղերու հմուտ է : Ու սովորական բանաձեւը վարժուած ենք լսելու :

— Հայերէն, Տաճկերէն, Գաղղիերէն, Թուրքանութիւն եւլն եւլն :

Ու երբ կը ներկայացընենք իրենց այն թուղթը ուր պիտի նշանակէ կենսագրական ծանօթութիւններն ու աւանդելիք ճիւղերը, նոյն իսկ քանի մը տող բացատրութեան մէջ դժուար չէ նշամարել որ շատերը աններելի սխալներ կը սպրդեցընեն անգիտակցաբար : Տեսած ենք նոյն իսկ վարժուհիներ որոնք իրենց ստորագրութիւնն անգամ սխալ կ'ուղղագրեն :

Առիթ ունեցանք ցաւակցելու այս նիւթին վրայ, Ուսուցչական Քննիչ Յանձնաժողովի անդամներէն մէկուն հետ, որ իր կողմէն սա բառերով կը հաստատէ մեր ըսածները :

«Այս չորս տարուան մէջ, Քննիչ Յանձնաժողովին ներկայացան աւելի քան

հարիւր ընտրելիներ, եւ դիտուեցաւ որ այդ պակասութիւնն զգալի կ'ըլլայ ամեն տարի ալ : Այնպիսիներ կային, կ'ըսէր մեր պատ. խօսակիցը, այնպիսիներ կային որ պարզ ընթերցանութիւն անգամ չէին կրնար ընել շնորհքով : Իսկ ուղղագրական սխալներու, քերականական վրիպակներու, շարահասութեան անկանոնութիւններու, բացատրութեանց անհետեւութիւններու եւլն. եւլն. չափ չկայ :

(Շարունակելի)



ԺՈՂՈՎՐԴ. ԲԱՆԱՀԻՒՍՈՒԹԻՒՆ  
ՃԳՆԱԻՈՐՆԵՐՈՒ ՄՍՏՈՒՌ

Գեղջկական անչուք խրճիթի մը մէջ կ'ապրէր ընտանիք մը . հայր, մայր եւ երկու զաւակներ, մէկը մանչ և միւսն աղջիկ : Ասոնք երջանիկ և բարեկեցիկ կեանք մը կ'անցընէին, քանի իրենց մայրը, իրենց գլխուն վրայ կը գտնուէր :

Անգութ մահը խլեց տարաւ իրենց մայրը, և թողուց զանոնք որբ : Մօր մահուընէն վերջ, աղջիկն ստանձնեց տան հոգատարութիւնը : Բայց այս իր կարողութենէն վեր էր, սրովհետեւ դեռ փոքր էր և չէր կրնար ամէն բանի համարիլ :

Այսպէս անցաւ երկու ամիս : Հայրը տեսնելով որ իր փոքրիկ աղջիկը մինակ չի կրնար կառավարել տունը, որոշեց ամուսնանալ որբեւարի կնոջ մը հետ որուն այրը քանի մը ամիս առաջ մեռած և երեք որբ ձգած էր :

Հարսնիքը կատարուեցաւ : Այս նոր մայրիկը կատարեալ պատուհաս մ'էր այն երկու խեղճ որբուկներուն : Փայտը անոնց վրայէն երբեք պակաս չէր ընէր : Կը ծեծէր, զուրս կ'ընէր և շատ անգամ ալ անօթի կը պահէր զանոնք : Հայրն այս բաներէն տեղեկութիւն չունէր : Բարի լուսուն կ'երթար արտ և իրիկուան մութին կը վերագոնար : Խեղճը կը կարծէր թէ իր փոքրիկները այնպէս կը խնամուին, ինչպէս այդ նոր կնոջ



բերած երեք զաւակները : Անոնցմէ գան-  
գատ մ'ալ չէր լսեր , որովհետեւ կը  
վախնային իրենց մօր վրայով բան մ'ը-  
սելու : Գիտէին որ յաջորդ առտու խըս-  
տիւ պիտի պատժուէին :

Այս երկու խեղճ որբուկներն երթալով  
կը նիհարնային : Իրենց այս վիճակը գտն  
էր : Ատոր դարման մը տանելու համար ,  
որոշեցին քոյր և եղբայր թողուլ իրենց  
հօրենական տունն և երթալ ուրիշ տեղ  
իրենց բախտը վնասելու :

Օր մը խորթ մայրը դարձեալ իր չար  
սովորութեան համեմատ , սկսաւ ծեծել  
զանոնք , և տունէն դուրս ընել : Այս ան-  
գամ ճշմարտապէս որոշեցին թողուլ ի-  
րենց տուն ու աեղ և հեռանալ : Իրենց  
դրացիներէն քանի մը օրուան պաշար  
առին և ինկան ճամբայ : Գացին հասան  
ձոր մը , ուր օձն իր պորտով հաւքն իր  
թեւով չի կրնար մօտենալ : Հիանալի ձոր  
մ'էր , զարդարուած ամէն տեսակ պըտ-  
ղատու ծառերով , գլխաւորապէս քաւ-  
նիկի<sup>1</sup> , դառնիկի<sup>2</sup> և ուրիշ ծառերով :  
Ձորին գրեթէ մէջտեղը ցցուած է կար-  
մրազեղին գոյնով հսկայ ժայռ մը , ո-  
րուն մէջ փորուած են քանի մը խցիկ-  
ներ , մնակեացներու համար : Քոյր և  
եղբայր զիչերն անցուցին այս խցիկնե-  
րէն մէկին մէջ : Քանի մը օր մնացին  
հոս , որովհետեւ ոչ մէկը կը խանգարէր  
իրենց հանգիստը : Իրենց ընկերներն էին  
այն բազմաթիւ մեղուններու խումբերը ,  
որոնք բարս<sup>3</sup> (պար) տուած և այն ժայ-  
ռերու խոռոչներու մէջ յարմար տեղ գտ-  
նելով ապաստանած են և սկսած են շա-  
րունակել իրենց գործունէութիւնը , հա-  
ւաքելով լեռնային անուշահոտ ծաղիկ-  
ներու հիւթը :

Քոյր և եղբայր կարծես ընտելացան  
այս կեանքին , ա'լ չէին ուզեր հեռանալ :

(1) Վայրի տանձ (2) Վայրի խնձոր  
(3) Երբ մէկ փեթակի մէջ քանի մը  
թաղուհի գտնուի , իրարու դէմ կը կըռ-  
ուին և մէկ կուսակցութիւնը կ'առնէ իր  
հետեւորդներն ու կը հեռանայ , այս  
գործողութիւնը կը կոչուի բարս :

Իրենց պաշարը հատնելու վրայ էր , ուս-  
տի ստիպուեցան այդ վայրի պտուղնե-  
րով ու մեղրով մնանիլ , եղբայրը որսոր-  
դութիւն ալ կ'ընէր եւ քոյր ու եղբայր  
կը կերակրուէին հոն :

Օր մը Ս . Կարապետը երազ կուգայ  
եղբօրն , ու անոր կուտայ ոյժ ու կարո-  
ղութիւն : Քոյրն ու եղբայր առաւօտուն  
ճամբայ ինկան եւ երկու ժամէն հասան  
Ս . Կարապետ :

Վարդալատի աճն էր : Ամէն կողմէն  
ուխտաւորներ ուխտի եկած էին : Ամէն  
տեսակ խաղեր , ձիարշաւներ տեղի կու-  
նենային արձակ հրապարակին մէջ , Բմ-  
բիչներ ու լարախաղացներ փորձերով կը  
զարմացնէին հանդիսատեսները : Եղբայրը  
դիտէր որ ինքն ալ այդ ձիրքով օժտը-  
ւած է : Ետանդ մը վառեցաւ իր հոգիին  
մէջ : Արտասանեց հետեւեալ բանաձեւն .  
« Ես մեռնիմ քղի Չանկլի տիվան Ս . Կա-  
րապետ , դու ընծի կարողութիւն խտաս  
և ցատկեց ելաւ լարին վրայ եւ իր վա-  
յելուչ ձեւերով ու ճարպիկ փորձերով  
զարմացուց բոլոր ուխտաւորներն :

Իրենց կեանքը ա'լ ապահովուած էր ,  
Եղբայրն ու քոյրը սկսան պտտիլ բոլոր  
վանքերն և փորձեր կատարել : Իրենց  
հոչակը տարածուած էր ամէն կողմ :

Անցան քանի մը տարիներ . քոյրն հի-  
ւանդացաւ : Եղբօր վրայ ինկած էր ա-  
նոր բոլոր հոգն ու խնամքը : Անգութ  
մահը , հակառակ եղբօր բոլոր հոգածու-  
թեան , խլեց տարաւ դայն : Քոյրը մահ-  
ուընէ քիչ առաջ ինչդեց եղբօրմէն , որ-  
պէսզի զինք տանի ձգնաւորներու Ձորը  
եւ հոն իւր սիրած բուլին<sup>4</sup> տակը թաղէ :  
Եղբայրը կատարեց անոր խնդիրքը , եւ  
այժմ հէք քոյրը թաղուած է այդ քարին  
քով բուլի մը տակ :

Եղբայրը լացէն իր մէկ աչքին լոյսը  
կորսնցուց . ասոր վրայ յուսահատելով՝  
սկսաւ սարէ սար , ձորէ ձոր պտտիլ եւ  
իրենց կեանքը երգել :

Ծերացած էր , ա'լ չէր կրնար ըմբի-  
շութիւն ընել , ուստի այս անգամ առ-

(4) Վարդենիի թուփ


աւ տաւիղ մը եւ սկսաւ աշուղութիւն ընել :

Կեանքը ծանր կուգար իրեն : Կը նմանէր իր ձագերը կորսնցնող աղաւնիի մը, որ թափառական կը սլտտէր այս ու այն կողմ ու մէկը չկար որ մխիթարէր զինք : Իր վերջին օրերը մօտեցեր էին, ուստի խնդրեց իր բարեկամներէն որ իւր մահու ընէն վերջն ալ իր սիրելի քրոջմէն չբաժնուելու համար, զինքը իր քրոջ քով տանին թաղէն :

Մեռաւ քիչ ժամանակէն եւ իր բարեկամները չմոռցան անոր խնդիրքը : Այժմ այդ հիանալի ձորին մէջ, ուր ամէն բան ճոխ է և առատապէս բաշխուած, ճգնաւորներու մատուոխն քով թաղուած են այդ երկու խեղճ որբուկները, վարդի մեծ բուլի մը տակ :

Ս. Կարապետ եկող ամէն ուխտաւոր իրր հետաքրքրական վայր մը կը յաճախէ հոն եւ այդ գերեզմաններու քով հաւաքուած քարերուն կոյտին մէջ մոմեր կը վառէ և իրեն զգեստի կտորներէն թել մը կը կապէ այն բուլին ճիւղերուն՝ ցաւերէ ազատելու համար : Այս երկու անմեղ որբուկներուն յիշատակը Մշեցի ամէն անհատի սրտին մէջ վառ է եւ վառ պիտի մնայ յաւիտեան :

Վ. ԱՐՏԱԿ



ԱԶԳԱԳՐԱԿԱՆ

ԿԷՏԻԿԻ ՆԱԽԱՊԱՇՇԱՐՈՒՄՆԵՐԸ

Կէտիկ կ'անուանուին Կեսարիոյ և Սեբաստիոյ միջեւ Զարգըչլայի գայմազամութեան՝ Գըզըլ-Ըրմազի հարաւը ինկող զիւղերը, ուր կը գտնուին հայ զիւղեր՝ Կէմէրէք, Գարակէօլ \*, Լիսանլը \*, Թօփաճ \*, Գայաբունար, Եափալըն :

Գըզըլ Ըրմազի հիւսիսը ինկող և նոյն գայմազամութեան վերաբերեալ քանի մը հայ զիւղեր ալ Զէպնի, Պուրհան\*, Տէնտիլ, Ալաքիլիսէ :

\* Անխառն հայ զիւղեր :

Այժմ միայն նախապաշարումներու վերայ հակիրճ տեղեկութենէ մը վերջ՝ կը խոստանամ տարբեր պատեհութիւնով մը սոյն գաւառին, որ զանց առնուած է զրական տեսութենէն լիովին, ամփոփ մի Տեղագրականը ի յայտ բերել ճիշտութեանը :

— Կիրակամուտ իրիկունը, մինչեւ որ ճրագ վառի, ջուր խմելը և կերակուր ուտելը աղէկ չէ :

— Կիրակամուտ իրիկուն տաք ջուր թափելը աղէկ չէ :

— Մեռելը տանելու ատեն դուրս ելլելու է, եթէ ոչ հախը հէրամ կ'ընէ :

— Եթէ մէկը փրոնդտայ՝ յօնքէն մաղ կը քաշէ. եթէ վրթի՝ միտքը եղած բարեկամը զինքը յիշած կ'ըլլայ :

— Երբ մեռել մեռնի՝ տան մէջ բոլոր ջուրերը կը թափեն, որովհետեւ մեռելը ձեռքը մէջը թաթխած կ'ըլլայ :

— Տունին դէուր (աւուած) մեռելին ետեւէն կը նետեն, որպէսզի ցաւ չոռ հետը տանի :

— Մեռելին տէրը երբ շատ լայ, աղէկ չէ. արցունքը մեռելին տեղը թափուելով թաց կ'ըլլայ, և հանդիստ չ'ըլլար :

— Եղունգները կտրելէ վերջ ետեւը նետելու է որպէսզի եթէ անդիի աշխարհը հարցընեն՝ ետեւէս կուգայ կոր ըսէ :

— Նոր հարսը քառսունքէն առաջ մութին դուրս չ'ելլեր, որպէսզի հով չի տան քզմեղ (քանդմեղ) աղէկները :

— Երկու ծննդաբերներ քառսունքը լրանալէ առաջ իրարու տուն չեն երթար :

— Երբ մէկը առանց զետինը տափակ նստելու, կոկողի կամ աթոռի վրայ նստելով ճաշէ, մեղմէ աղէկները տակէն կը կրեն ու չի կշտանար :

— Ճրագկալին (վայտէ գործիք մը որուն վրայ մախր կամ ճրագ վառելով կը դնեն) վրայ եթէ առանց քարը դնելու կրակ դնես, անդի աշխարհքը հօրդ զլիւնն վրայ կը դնեն :

— Ճրագկալը եթէ չկործանած պառկիս, քզմեղ աղէկները « Խօնչ կ'ընես կոր» հարցնեն նէ՝ «Մեռել կը պահպա-



նեմ» կը պատասխանէ ճրագկալը:

— Հարուստին լուացողուքը(աման լը-  
ւալու սահմանուած) եթէ ուրիշ մը տա-  
նի՝ ան տանը խեր ուպէրէքէթն ալ հե-  
տը կը տանի:

— Երեք անգամ կարգուողին ըռա-  
փաթան (գործիք մը որուն վրայ հացը  
դնելով թոնիրը կը փակցնեն) երբ գող-  
նալով ջուրը ձգես՝ անձրեւ կուգայ:

— Երբ նոր հարսը տիւտիւք չալէ կամ  
սուրէ՝ կեսուրը շատախօս կ'ըլլայ:

— Նոր թոնիրէն ելած հացէն առա-  
ջին անգամ ուտողը կը մեռնի:

— Ծառածնի կիրակիին չի բանուիր:

— Ձի մը կամ էջ մը, ո՛ր եւ իցէ ա-  
նասուն մը եթէ ծախեն՝ սուղէն մաս մը  
կ'առնեն, որպէս զի խեր ու պերեքէթը  
հետը չի տանի:

— Եթէ նոր հարսին տունէն քիչ մը աղ  
գողնաս՝ հարսին լեզուն անուշ կ'ըլլայ:

— Եթէ աղջիկները կամ կիները էրիկ  
մարդու հետ ճաշեն՝ էրիկ մարդիկ դոշ  
(քէօսէ) կ'ըլլան:

— Տէրինտասին (Տեառնդառաջ) կրա-  
կէն այրած փայտ տանելով՝ հաւնոցը կը  
դնեն, որպէս զի հաւերն ածան ըլլան:

— Եթէ ոջիւր ողջ ողջ նետես՝ անդիի  
աշխարհքը շուն ըլլալով ետեւէդ կը հաչէ:

— Ձօքանչը եթէ փեսային երեսը չի  
համբուրէ, անդիի աշխարհքը շան երես  
կը պահէ (\*):

— Երկինք դեռ նոր գոռալու ատեն՝  
կրցածիդ չափ մեծ բեռ վերցուր, այն-  
չափ իւղ կը կապես:

— Քոյրը հարս եղած ատեն՝ եղբայրը  
եօթն անգամ քէմէրը մէջքին վրայ կը  
պտտցնէ «եօթը ինծի պէս», մէկ քեզի  
պէս՝ ըսելով:

Կ. Գ.

(\*) Աղուո՛ր պատրուակ զքքանչներուն՝  
իրենց փեսան համբուրելու... Ծ. Խ.

Մամուռի սակ ե  
Շաղկախաղ Հաւախածոյ  
Ս. Դաւթեանի  
Բ. Տիպ

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

ԳՐԻԳՈՐ ԶՕՀՐԱԳ

Գրիգոր Զօհրապ 1860ին Պոլիս ծնած է:

Նախնական կրթութիւնն աղք. վար-  
ժարանաց մէջ ստացած է և յետոյ Կա-  
լաթա Սէրայի Լիգէոնն, ուր 16-17 տա-  
րեկանին ամենայաջող քննութենէ մը  
վերջ ստացած է Ingénieur des Ponts  
et Chausséesի վկայագիրը:

Ասով ալ չբաւականանալով Կայս. Ի-  
րաւագիտական վարժարանը մտաւ եւ  
ներկրու փաստաբանի մը համբաւով  
գործօն կեանքի մը սկիզբը ըրաւ:

Գ. Զօհրապ՝ իբր հրատարակագիր՝  
բոլորովին ինքնուրոյն եՄ մ'ունի. գրու-  
թեան ոճը ջղուտ է և իր պայքարասէր  
յօղուածներն և ex cathedra արձակած  
վճիռները մէկէ աւելի կեղծաւոր դի-  
մակներ վար առած են: Իր անդրանիկ  
հրատարակութիւնն է վէպիկ մը ԱճԻ-  
սացած սերունդ մը, Մասիսի մէջ կրեւ-  
ցած: Տեղական կեանքէ առնուած է  
նիւթը այդ վէպին, ուր կրակ ու բոց գր-  
չով մատնանիչ կ'ընէ պոլսական երբեմնի  
սերունդը:

Այս հրատարակութենէն առաջ Գ. Զօհ-  
րապ կ'աշխատակցէր արդէն Երկրա-  
դունեց ամսաթերթին. հոս շատոնց ու-  
շաղրութիւն գրաւեցին իր « Չիւնական  
նամակացի » և քննադատական յօդ-  
ուածները, Տիկին Տիւսարի պաշտպա-  
նած féminismeի դատին դէմ (\*): Անդա-  
մակցած է նմանապէս 1891էն 1896 հը-  
րատարակուող Օրաթերթի մը մէջ իր  
ստորագրութեան ներքեւ երեւցած  
գրական յօղուածները դեռ ցայսօր կը  
յիշուին: Իր հեղինակութիւնը համար-  
ուող « Նարդիկ » վէպը բաւական ինք-  
նագիր է. ափսո՛ս, սակայն, որ կիս-

(\*) Գ. Զօհրապ անկէ ետքն ալ առիթ  
ունեցաւ այդ նիւթին վրայ իր դաւա-  
նանքը պարզելու Կանաչի ոսկի պնեղ-  
ներուն գովասանքը կարգաւով՝ քան որ  
եւ է բարոյական ձիրքը: Ծ. Խ.

չատար թողուց, որով կարելի չէ կար-  
իք յայտնել :

Գ. Զօհրապ Օրաթերթի մը մէջ ալ գե-  
ղեցիկ նորակապեր գրած է, որոնց շնոր-  
հիւ մանաւանդ իր գրական համբաւը  
հաստատուն կռուան մ'ունեցաւ : Իր  
այս նորավէպերով, սակայն, շատերուն  
գայթակղութիւն պատճառ է, որովհետեւ  
նախընտրած է այնպիսի նիւթեր, զո-  
րոնք ֆրանսացի արդի վիպասանական  
Դպրոցին աշակերտները համարուող Մար-  
սէլ Բրէվօ և Մօրասան կը սիրեն : Ամէն  
անոնք, որ գրութեան մը մէջ բարո-  
յական նպատակ մը կ'որոնեն, Գ. Զօհ-  
րապի գրիչէն կը խորշին (\*):

Այս վէս Գրիչը 1893ին իր տնօրինու-  
թեամբ ու խմբագրութեամբ սկսաւ հը-  
րատարակել Մասիս հանդէսը զոր մա-  
նաւանդ Պոլսոյ հայ գրականները կը  
պաշտպանէին : Այս ժամանակամիջոցին  
Մասիսին ամենէն համով հոտով յօդ-  
ուածները բնականաբար Գ. Զօհրապին-  
ներն էին որուն Մանօր Դեմեռու շարքը  
— Բ. Քէչեան, Գուրգէն, Սիպիլ, Թ.  
Թէրզեան, Օ. Նօճասարեան, Տք. Գ.  
Սեւեան — ստուգիւ յաջող եւ վայր-  
կենական (instantanée) քննադատական-  
ներ են : Իր էսլվայս յօդուածն ալ ի-  
րական գոյն մը ունի. իր Աւելը առակի  
կարգ անցած է. — Զօհրապին Աւելը  
ո՞վ չիգիտեր :

Գ. Զօհրապին հանրային գործունէու-  
թիւնն ալ տարօրինակ է : Իբր կրթական  
ժողովներու անդամ, միշտ եւ ու զեռ և  
վիճաբանող դիրք մը բռնած է հանդէպ  
ամենուն : Ժողովոյ անդամ ալ ընտրը-  
ուած է բայց տարիքի պատճառով կրցած  
չէ Դալաթիոյ եկեղեցիին ժողովաստիճան  
մասնել :

Գրիգոր Զօհրապ ներկայ Պոլսահայ  
գրիչներուն մէջ իր ոճովն առանձին դիրք  
մը բռնած է միշտ : Միշտ վիճաբանող,  
միշտ խարազանող եւ միշտ քննադատ :

(\*) Իրենց դաւանանքն ըլլալով *Ça se fait, mais ça ne se dit pas* ֆրանս. առածը :

Ծ. Ն.

Զօհրապ շատ մը բոյն դրած զեղծումներ  
արմատախիլ ըրած է. իր բաց ոճին,  
խրոխտ դարձուածքներուն համար սի-  
րելի չէ և զինքը կ'անուանեն Պոլսոյ  
Հայոց Զօլան (իմա՛ բաց լեզուին համար) :

(Բ.)

Յ. Յ. Ա.

ՅԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՂԵՔՍԱՆԴՐՈՅ ԴՊՐՈՑՆ

ԵՆ ՀԱՅՈՑ ՀԻՆ ՄԱՏԵՆԱԿՐՈՒԹԻՒՆԸ

(Շար. Բիւրակն քիւ 41Ե6)

Թէեւ Պոտամոնէ Ալէքսանդրիոյ զբո-  
րոցին հիմնադիրն է, որուն վերջնական  
ձեւը տուաւ Ամոնիոս Սակաս, ( 200 )  
բայց Պլոտինոս Լիւկոպոլսեցին եղաւ Ա-  
լէքսանդրիոյ զպրոցին լոյսն ու փառքը :  
Այս հռչակաւոր միտքիականը որ ամօթ  
համարելով իր ուրիշ մարդոց հաւասար  
ծնունդը՝ ծածկեց իր ծննդեան ժամանա-  
կը, ցեղը ու ազգատոհմը, ծնաւ 205ին  
ու մեռաւ 270ին, Կլօդիոս Բ. կայսեր  
վերջին տարիները : Հեղինակ է « Եննէ-  
ական » գրքին : Այս Եննէականը չփո-  
թելու չէ վերգլիխոսի էնէական զիւցաղ-  
ներգութեան հետ :

Ճամբորդեց Պարսկաստան ու Հնդ-  
կաստան : Իր վերքը հրատարակեց Պոր-  
փիւր : Եննէականը Ալէքսանդրիոյ զբո-  
րոցին յիշատակարանն է, յիշատակա-  
րան մը կամ գիտութիւն մը՝ ժամանա-  
կին շատ տարածուած ու գերահռչակ :  
Այս իմաստասիրական գրուածքին մէջ  
շատ նուրբ արամասութիւն մը ընդդի-  
մախօսական եղանակաւ կը ջանայ, ա-  
ռանց փորձառական գիտութեան, խըն-  
դիրները վերլուծել, շատ անգամ ծիծա-  
ղելի եղանակաւ մը, տրամասութիւն մը  
որ աւելի եղջերուաքաղ մըն է : Պլոտի-  
նոս գրեթէ 25 տարի Հոմոփի մէջ մար-  
գարէութիւն կ'ընէր :

Պլոտինոսի աշակերտն էր, Հին Հայ Մա-  
տենագրութեան մէջ, Դաւիթ «Անյաղթ»ի  
թարգմանութեամբ ծանօթ Պորփիւր ա-  
տորին (232-304), իսկատիպ եւ գրեթէ



նուազ Միստիքական Ալեքսանդրացի իմաստասէրը: Նախ հետեւեցաւ Որոզինի Տիւրոսի կամ Պաղեստինացոց Կեսարիոյ մէջ, յետոյ Աթենք անցնելով յաճախեց Ալոզինոսի ու Լոնգէնոսի լսարանները: Մինչ քսան տարեկան էր, գնաց Հռոմ, Եղիպոսոս: Հռոմի մէջ աշակերտեցաւ Պլոտինոսի. ասոր հանճարին ու իմաստասիրական գրութեան այնչափ սիրող ու զարմացող էր որ հետամուտ եղաւ հաւաքել անոր գրուածքները, ծաւալել վարդապետութիւնը: Ոմանք Հրեայ կարծեցին հաւատքով, բայց Ս. Օգոստինոս եւ Սոկրատ Սկոլաստիկոս պատմագիրը կ'ըսեն թէ Քրիստոնեայ էր, Քրիստոս շատ կը յարգէր, չափազանց հակամէտ խորհուրդներու (mystère) եւ հրամանակարգի (dogme): Չկրնալով յարատեւել Քրիստոնէութեան մէջ, անոր հակառակամարտ կ'երեւայ իր գրուածքներով: Պորփիւր Նոր Կտակարանի մէջ հակասութիւն գտնելու կ'աշխատէր. Դանիէլի մարգարէութեանց համար սուտ էր կ'ըսէր, և կը պնդէր թէ ասոնք Աւետարանէն ետքը գրուած են: Չէր հաւատար թէ Դժոխքի պատիժները յաւիտենական են: Քրիստոսի նկատմամբ յարգութեամբ կը խօսի, բայց զայն իբրեւ Աստուած պաշտողները կը դատապարտէ, Մարգ—Աստուածէն վեր կը համարէր Գերագոյն Աստուած մը, առանց պաշտամունքի, առանց արարողութեան եւ առանց միջնորդի, եւ որ միայն իմաստասէրներուն մատչելի է: Պիւթագորի ու Հնդկի իմաստասիրութեան հետեւելով՝ Հոգեյաձուլութիւն (Transmigration des âmes) կը քարոզէր: Հիները ինչպէս նաև մինչեւ հիմայ, Métampsychose = transmigration des âmes Հոգեփոխութիւն կը թարգմանեն որ սխալ է: Հոգին ո՛չ մէկ իմաստասիրական վարդապետութեան ու նաեւ կրօնքի մէջ չի փոխուիր, այլ կը յածի և ասոր համար հոգեյաձուլութիւն եւ ոչ թէ հոգեփոխութիւն: Պորփիւր իր վարդապետին տեսութեանց համեմատ, կ'ընդունէր թէ մեր մտածումները անտեսանելի էակնե-

րու — իսկներու զուգահեռական խումբ մըն են: Ասոնք միայն իրական են: Այս պէս, Պորփիւր Միջին դարու իրական դպրոցին նախաշաւիղը դժեց:

Քրիստոնէութեան հետ հաշտ չմնալով՝ հին կրօնքը վերանորոգեց՝ վարդապետելով թէ աստուածները երկնային հոգիներ են, բարեխօսներ, զորոնք պէտք է սիրաշահիլ, ողորքել զո՛ներով ու աղօթքներով: Մոգերու օրինակին հետեւելով՝ այս աստուածային զօրութիւնները կը դասակարգէր իբրեւ առանձին նուիրապետութիւններ, անսահման բարի կամ չար ոգիներով:

Պորփիւր Արիստոտելի « Ստորոգութիւնք » = organon գրքին ներածութիւնն ալ ըրած է, Իզակիկէ: Պորփիւրի թարգմանութիւնը ոչ միայն մեր մէջ այլ եւ միջին դարու իմաստասիրական դպրոցներու մէջ մեծ դեր կատարած է: Մեր մէջ Պորփիւրի Ներածութիւնը Դաւիթ Անյաղթի միջոցաւ ծանօթ է:

Դաւիթ Անյաղթ Պորփիւրի ներածութեան վերլուծութիւնքն ալ ըրած է: Անյաղթի աշխատութիւնը աւելի օգտակար կ'ըլլար, եթէ աւելի անխառն ըլլար իրեն սովորական հելլենագրութեանէն: Մեր հին մատենագրութեան վերջին տարիներուն մէջ շատեր Անյաղթի ու Պորփիւրի իմաստասիրական գրուածքներուն պարապած են որոնց երկասիրութիւնները մեզի ալ հասած են, ինչպէս Գր. Տաթեւացի, Առաքել Սիւնեցի, Սիմէոն Կաթողիկոս, Սիմէոն Դառնեցի եւն: Մատենագրական բաւական կարեւոր խնդիր են թէ ո՛վ թարգմանեց Պորփիւրի ու Արիստոտելի գրուածքները, և թէ ո՛վ էր Դաւիթ անյաղթ օրուն կը վերագրուի ասոնց հայերէն թարգմանութիւնը: Այս խնդիրները լուծեց հայագէտ Կոնիւրեր անգլիացին՝ Դաւիթ Անյաղթի վրայ իր կատարած քնննադատական ուսումնասիրութեամբը:

Կը հարցնէ հայագէտը. Դաւիթ անյաղթ ինչ ազգէ էր: Ե՞րբ ապրեցաւ և ո՞ր: Ասոր պատասխանը նոյն ինք կոնիւրեր կուտայ սապէս «Այս ինչորոց մա-

ամբ պատասխանը գտած կը կարծէ վալէնդին Ռոզէ գիտնականն Յունարէն Կեռագրի մը Ս. Դաւիթի Թեսաղոնիկեցւոյ մէկ կենսագրութեան մէջ զոր Բրուսիական կառավարութիւնը գնեց Պլէն-հայմի գրատնէն, եւ այժմ Պէրլին Լ: Ռոզէի 1887 ին ի Պէրլին հրատարակած այս ճառէն կ'մանանք որ Դաւիթ սուրբ եւ անապատական անձ մըն էր, որ ծերացեալ եկաւ Բիւզանդիոն եւ տեսակցութիւն ունեցաւ ինքնակալ կայսեր եւ կայսրուհւոյն հետ որոնց վրայ մեծ ազդեցութիւն ըրին իր տարիքն ու սրբութիւնը: Սակայն այս յոյն սուրբին ամենէն հետաքրքրական կէտն նոյն իսկ այն է որ հայազգի մըն էր հաւանականաբար՝ նոյն իսկ ըստ յունական տեղեկութեանց: Այսպէս Ռոզէ կը բերէ ի վկայութիւն զՅովհաննէս Մոսքի առ այն թէ այս Դաւիթս ծննդեամբ ի Միջագետաց էր. եւ Վասիլ կայսեր Յայսմաուրքին մէջ Յունիս ամսուն մէկ օրը նուիրուած է ի յիշատակ «Սրբոյ հօրըն մերոյ Դաւիթի Թեսաղոնիկեցւոյ որ եկն յԱրեւելից»։ Ծերացեալն Դաւիթ հեթանոսական իմաստասիրութեան զգայական հետապնդութիւնը լքած՝ ինքզինքը տուած է քրիստոնէական ճշգնութեան անձնուրաց կենաց: (Հմտ. «Քննութիւնք Գրոց Դաւիթ Անյաղթի», Թրգմ. Հ. Յ. Վ. Տաշեան, Վիէննա, 1893 էջ 15-16)։ Ուրիշ տեղ մը, էջ 21, հայազէտ կոնիքեր կ'աւելցնէ թէ Աթէնք կ'ապրէր Դաւիթ անուն հայազգի մը, որ փիլիսոփայութեան ուսուցիչ էր: Արիստոտելի ու Պորփիւրի վրայ այն մեկնութիւնները շատ լաւ կրնան այս հայազգի ուսուցչին գործն ըլլալ որ 30 տարի կեցաւ Աթէնք՝ 406 և 451 թուականներուն մէջ: Դաւիթ Անյաղթի վերլուծութիւններն հայերէնի թարգմանուած են, «Ի թուականութեան ՀԶ (= 627) հրամանաւ Տեսոն Յովհաննէսի կաթողիկոսի Գարեղենացւոյ, եւ վկայէ գրոցս այսմիկ Սարգիս Արաբացի եպիսկոպոս ճշմարիտ վկայութեամբն»։ Ուրեմն Դաւիթ Անյաղթ 406-451 Աթէնք իմաստա-

սիրութեան ուսուցիչ էր որուն գրուածները հայերէնի թարգմանուեցան 627ին, Արիստոտելի գրուածքներուն հետ, անշուշտ Սիւնեաց դպրոցին ձեռքով, ո'չ թէ նոյն ինքն Դաւիթ Անյաղթն է որ յունարէնէ հայերէնի թարգմանեց իրեն վերագրուած թարգմանութիւնը: Մէկ խօսքով Դաւիթ Անյաղթ Աթէնքի նոր Պղատոնական իմաստասիրութեան հայազգի ուսուցիչը Պորփիւրի ներածութեան վերլուծութեան հեղինակն է միայն, ոչ թէ իրեն անունով մեզի հասած թարգմանութեան: Անշուշտ Աթէնքի փիլիսոփայութեան ուսուցիչը Դաւիթ ու Թեսաղոնիկէի Ս. Դաւիթը միեւնոյն անձնն են, որչափ կը հասկցուի հայազէտին գրուածքն:

Պղատոնի վարդապետութեան յարած էին նաեւ Որիզինէս (պէտք է շիտթել այս Որիզինէսը միւս Որիզինէսին հետ որ քրիստոնեայ էր, ինչպէս պիտի տեսնենք): Լոնգինէս, Պաւլիւրի Զենութիա թագուհւոյն նախարարը, նաեւ Ներենիոս ու Ամիլիոս: Պորփիւրի երկունշանաւոր աշակերտներն են Թէոդորոս ու Յամբլիկոս: Թէոդորոս հաւատարիմ մնաց իր ուսուցչին քննադատական ոգիին, մինչ Յամբլիկոս մոգական ոգեկոչութեամբ նշանաւոր կը հանդիսանար: Յամբլիկոս Խուրին Ասորիքի Քալկէս քաղաքէն էր, հայրենակից Հոռմի Հելիոգաբալոս կայսեր (217-222) որ Եմեսա = Հէմա պաշտուած կրօնքի մը քրմապետն էր: Յամբլիկոս Եգիպտական խորհրդապաշտութեան յարեցաւ: Հրաշքներ կը գործէր զոր կապաշտները քրիստոնէական հրաշքներէն ալ աւելի նախամեծար կը համարէին: Յամբլիկոսին հեղինակութիւնն է Հերմեսագորֆը որ աւելի կապալական գրուածք մըն է: Նոր Պղատոնական են ասոնք ալ, Սոպատր, Եգեսիոս (իր Եգեսիա ու Սոսիպատրա աղջիկներով):

(Շար.) Դ. Խ.

34րդ հոստոսովորութիւն ԳՈՒԹԵՆ ԴՈՒԹԵՆ ԴՈՒԹԵՆ ԴՈՒԹԵՆ ԴՈՒԹԵՆ



ՆԱԽԱԿՐԹՈՒԹԵԱՆ ԱՄԲՈՂԶ ԴԱՍԸՆԹԱՑԲ

ՀԱՄԱԿԵԴՐՈՆ ԴՐՈՒԹԵԱՄԲ

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Բարոյագիտութիւն, Բաղաժ. Կրթութիւն,  
Պատմութիւն, Աշխարհագրութիւն, Թուարանութիւն,  
Գիտական ուսումներ, Մայրենի լեզու

Տարրական Հնրացք

Ա. ՊՐԱԿ

ԿԸ ՊԱՐՈՒՆԱԿԷ

76 Դաս	13 Առած
24 Պատկեր	128 Հրահանգ
Արտասանելի Հատուածներ	

اشبهو مكتب جديد نام اثر معارف نظارت جليله سنك في ۱۳ نيسان سنه ۱۳۱۶ تاريخي  
و ۴۵ نومروي رخصتنامه سيله. وسعياط داوديان معرفتيه ترتيب و طبع اوله مشدر



Հ Ր Ա Տ Ա Ր Ա Ն Կ Ի Չ

ՍՄԲԱՏ ԳՈՐԾԵԱՆ

1900

ՆՈՐ ԴՊՐՈՑ

Տարրական Երջան, Առաջին Ամիս

Գ Ա Ն Ի Մ Ը Խ Յ Ս Գ

Համակերպոն Դրութիւն կը կոչուի ընդհանրապէս ուսուցման այն եղանակը որ կը տրամադրէ միևնոյն ճիւղը դաս տալ նախակրթութեան Տարրական, Միջին և Բարձր կոչուած երեք աստիճաններուն մէջ:

Այս դրութիւնն ընդունուած էր արդէն եւրոպական ազգերու մեծ մասին մէջ, եւ Ազգ. նախակրթութեան համար ալ նոյն սկզբունքը հիմ բռնելով՝ պատրաստուեցաւ Կազմ. Կանոնադիրն ու կրթական Ծրագիրը, որոնց համեմատ Հայ վարժարանները կազմակերպել եւ վարելու ջանք մը սկսած է ամէն կողմ՝ Պոլսէն մինչեւ գաւառներու յետին գիւղերն ուր ազգ. դաստիարակութեան կայծ մը կը պլպլայ այսօր:

Պնդել թէ ամէն տեղ այս Համակերպոն Դրութիւնը, [որ մեր մէջ Դասարանական Դրութիւն թանձրացած անունին տակ շատ յեղյեղուեցաւ], պէտք եղած կերպով ըմբռնուած ու գործադրուած է, քիչ մը չափազանց լաւատեսութիւն պիտի ըլլար. բայց կրնանք ընել թէ գաղափարը տակաւ տարածուիլ սկսած է, միայն թէ գործադրութեան մէջ կային ու կան դժուարութիւններ, թերիներ որոնք հետզհետէ պիտի հարթուին պիտի գոհացուին:

Արդարեւ այս նոր դրութիւնը գործադրելի ընելու համար չէր բաւեր Պոլսոյ մէջ Ուսուցչական Ժողովի քանի մը նիստ ընել, լրագրական թեր ու դէմ՝

անյարիր հրատարակութիւններ ընել եւ լոյ մէկ երկու տետրակով՝ Կազմական Կանոնադրով ու Կրթական Ծրագրով՝ ըմբռնելի ընել դաստիարակութեան այս նոր եղանակը՝ որքան ալ օգտակար ըլլայ:

Պէտք կար ամբողջ Ուսուցչական Մարմինը լուսաւորել հրահանգել այս նոր մեթոտին մէջ, և մանրամասնօրէն բացատրել մեթոտին կիրառումը, գործադրութեան ձեւն ու պայմանները. մէկ խօսքով ուսուցիչներ պատրաստել կրթական այս նոր ոճով:

Միւս կողմէ, անհրաժեշտ էր այս դրութեան հիմերուն վրայ ծրագրուած դասագրքեր յօրինել եւ գործածել տալ: Այսպէս ահա, երեք կարեւոր խնդիր կար լուծուելու. Գործը՝ մեթոտը՝ ճանչցնել,

Գործաւորը հրահանգել,

Գործիքը հայթայթել:

Կեղծիք մ'է ուրանալ թէ այս երեք կարգի աշխատութիւններն ալ թերի կերպով կատարուած են: Ու ընական է նր այս անկատարութեան մէջ լիովին ձեռք բերուած չըլլայ Համակերպոն Դրութեան ընծայած ամէն առաւելութիւն:

Ըստ մեզ, այդ երեք միջոցները իրարմով կրնան արդիւնաւորուիլ՝ Գործը, Գործողը և Գործիքը միահաղոյն շարժման, գործունէութեան ենթարկելով. ու մանաւանդ Գործիքը՝ [որ է Համակերպոն Դրութեամբ յօրինուած դասագրքեր] պատրաստելը միւս երկու միջոցներուն արդիւնաւորման գլխաւոր սատար պիտի կրնար ըլլալ: Բայց, Կեդր. Պատ. Ուսումն. Խորհուրդը, իր բոլոր բարեյօժար տրամադրութեամբ հանդերձ, ի վիճակի չէր՝ գոնէ դրամական տեսակէտով՝ լոյս ածել դասագրքերու ստուար շարք մը՝ համաձայն այն նոր դրութեան որով Ազգ. Վարժարանները

վարել կը տրամադրէ իրմէ բղխած ու վարչութենէն վաւերացած արդի Ազգ. Կրթական Օրէնքը:

Եւ արդէն, ամէն բան Ուսումնական Խորհուրդներէ սպասել խելացի գործ չենք դոներ: Քիչ մ'ալ անհատական ուժով ու ձեռներէցութեամբ մեր պէտքերուն հասնիլ վարժուինք:

Ահա այս տեսութեամբ, ու քաջալերուած այն միահամուռ ընդունելութենէն որ ընծայուած է Դասութեան Գործակալութեան հրատարակութեանց, ձեռնարկեցինք Համակերպոն Դրութեամբ դասագրքերու շարք մը ի լոյս ընծայել՝ սկսեալ Տարրական Ընթացքէն սրուն Առաջին Ամիսն է այս պրակը:

Նոր Դպրոցի այս ընթացքը պատրաստուած է հետեւողութեամբ Ֆրանսերէն Ecole Moderneի, գործ հանրածանօթ Ուսուցչապետ Ա. Սէնեէզի: Պէտք չի կար, սակայն, ճշտիւ ու կէտ առ կէտ հետեւիլ Սէնեէզի համանուն գործին, ու մենք ջանացինք մեթոտը, կաղապարը փոխ առնել. իսկ նիւթերէն՝ ուսանելի առարկաներէն մեծ մասը բարեփոխել, յարմարցնել մեր միջավայրին, մեր լեզուին ու մեր պէտքերուն:

Յաջողած ենք թէ ոչ՝ այդ մասին չենք ուզեր շատ լաւատես ու մեծխօսիկ ըլլալ: Բայց դո՛նէ վըստահ ենք թէ մեթոտը, որուն հետեւեցանք՝ նորագոյնն ու լաւագոյնը կը թուէր մեզի ու գրեթէ ապահով ենք թէ, ինչպէս ճրանատական ազգ, կրթութեան, նոյնպէս եւ մեր դպրոցներուն համար օգտակար ու արդիւնաւոր պիտի ըլլայ այս ձեռնարկը՝ գոնէ որոշակի ու գործնական ձեւի մը տակ ցոյց տալով թէ ի՛նչ է Համակերպոն կոչուած կրթական Դրութիւնը:

« Սքանչելի դրութիւն մ'է ան, կ'ըսէ Բօլ Պէր,



որ կը կայանայ քանի մը տարիներ յաջորդաբար աւանդել տղոց՝ միեւնոյն ծանօթութիւնները՝ միեւնոյն կարգով ու միեւնոյն աստիճանաւորութեամբ, բայց յարաճուն յաւելումներով եւ զազաւարներու զարգացուն բարձրացումով: Իրերու յատուկ ու յատակ ծանօթութիւնը եւ մաքի ընդհանուր մշակումը այս կրկնութիւններով պիտի ձեռք բերուին: »

Նոր Դպրոցին առաւելութիւններէն մէկն ալ այն է որ կարելի պիտի ընէ հասատել կանոնաւորութիւն և միօրինակութիւն մեր դպրոցական ուղղութեան մէջ՝ որ մինչեւ այսօր մեր կրթական գործին իրաւամբ քննադատուած կէտերէն մէկն է:

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Յ Ա Յ Յ

Նոր Դպրոցի այս Ա. Դասընթացը պիտի բաղկանայ 10 սեփերէ՝ իւրաքանչիւրը պարունակելով մէկ ամսուան մէջ ուսանելի ամէն առարկաները: Ուսման առարկաներն ու դասաժամերը հետեւեալ կերպով բաշխուած են.

	Շաբաթը	Ամիսը	Տարին
Ա. Բարոյագիտութիւն	2×4=	8×10=	80
Բ. Քաղաքացիական կրթութիւն	1	4	40
Գ. Պատմութիւն [Հայ-Եկեղեց.]	2	8	80
Դ. Աշխարհագրութիւն	2	8	80
Ե. Թուարանութիւն	5	20	200
Զ. Գիտութիւններ	2	8	80
Է. Մայրենի լեզու	5	20	200
	19×4=	76×10=	760

Ուրեմն, այս նոր դրութեան համեմատ, այնպէս կար-

գադրուած է որ վերոյիշեալ եօթը սեսակ ուսման առարկաները ամբողջ տարուան մէջ պիտի աւանդուին 760 դասով (դպրոցական պահ):

Ասոնցմէ զատ, բնական է որ դպրոցական ժամեր աւելնան. օրինակ՝ օրական 5 դասաժամ հաշուելով՝ կ'ունենանք շաբաթական 30 ժամ, ամիսը 120 ժամ եւ տարին 1200 ժամ զոր ուսանողները պիտի անցընեն դասարանի մէջ:

Արդ 1200 - 760 = 440 ժամն ալ տրամադրելի է Նոր Դպրոցի մէջ մշակուած 7 ճիւղերէն դուրս մնացող առարկաներուն [ = Ընթերցանութիւն, Դեղագրութիւն, Գծագրութիւն, Երգ, Մարմնամարզ Ձեռարուեստներ (աղջիկներու համար) եւլն.]: Իսկ Առողջաբանութիւնը, իր կարգին, գիտական ուսումներուն հետ: Ուսի կը յանձնարարենք բանիմաց ուսուցիչներուն, որ այս առարկաներն ալ վերոյիշեալ 7 ճիւղերուն հետ օր ընդ մէջ բաժնելով՝ տեղական պայմաններու եւ դասարանական կազմակերպութեան համաձայն ճիշտ ու գործարարէի Ժամանակացոյց մը յօրինեն, եւ ըստ այնմ վարեն իրենց դասաբունները: Ասկէ աւելին ընել՝ մեզի բուեցաւ ուսուցիչներու իրաւունքին միջամտել, անոնց ձեռներեցութիւնը կասկածի տակ ձգել. մանաւանդ որ տեղե տեղ երկրորդական կէտերու համար պզգիջ փոփոխութիւններ ո'չ միայն ներքին՝ այլ եւ անհրաժեշտ են:

Ա. ԴԱԻԹԵԱՆ

Կ, Պոլիս, 5 Նոյեմբ. 1900



ԼԵԶՈՒԱԲԱՆԱԿԱՆ

ԱՅՆԹԱՊԻ ԳՈՒԱՌԱՅԱՐԱՐԱՅՈՒՐ

Այնթապ թրքախօս է, եւ հայերէն գաւառաբառեր հրատարակել Այնթապէն՝ զարմանալի կը թուի անշուշտ: Բայց իրողութիւնը սա է որ Այնթապ հայերէնախօս եղած է երբեմն, եւ ապա հայերէնը՝ գաւառաբարբառը՝ ազդուած պէտք է ըլլայ Սելեւկեան եւ Միջագետքի, լաւ եւս Եփրատացի հարեւան ժողովուրդներէն: Մեր միջոցները չեն ներեր որ այս մասին մանր զիտողութիւններու մտնենք:

Սոյն բառերը՝ դպրեւանքի մէջ այսինքն 1893 Մայիսին, սկսած եմ հաւաքել յիշողութեանս ուժով. Այնթապէն հեռանալէ գրեթէ 4 տարի յետոյ: Եւ երբ հիմա հրատարակութեան կուտամ, պատճառը սա է որ չուզեցի ցիրուցան թողուլ զանոնք, մանաւանդ կը փափաքէի կարելի եղածին չափ ուսումնասիրութիւն մը կցել բառերուն քով. բայց կը տեսնեմ որ մեր պաշտօնը շատ հանդիստ ժամանակ չունի այդպիսի հետաքրքրութիւններ գոհացնելու:

Այնթապի բառերը առտնին կեանքի մէջ շատ կը գործածուին, թէ՛ ոճի եւ թէ՛ լոկ բառի ձեւերով: Այս բառերուն շատերը մօրս բերնէն լսած եմ. եւ որովհետեւ Այնթապէ հեռանալէս բաւական ատեն յետոյ սկսած եմ բառերը հաւաքել յիշողութեանս ուժով, կրնայ ըլլալ որ քանի մը բառերու նշանակութիւնը թերի կամ սխալ տուած ըլլամ, եւ մանաւանդ հոյլ մը բառեր ալ մոռցած:

Այս մասին լաւ կ'ըլլայ, եթէ Այնթապի ընթերցողները ուշադրութիւն ընեն եւ մոռցուածներն ու թերիները ճշդելու հոգ տանին:

Կ'արժէ որ երկու խօսք ըսենք Այնթապի այս բառերու պահպանման նըկատմամբ:

Միայն Այնթապ չէ՛ որ թրքախօս է և հայերէն բառեր ունի: Բոլոր այն քաղաքներ, ինչպէս Կեսարիա, Եօզղատ,

Էնկիւրիւ, Պիլէճիք, Պուրսա եւլն, որ Այնթապի պէս թրքախօս են, առաւել կամ նուազ հայերէն բառերու կարեւոր մթերք մ'ունին:

Եւ երբ ուշադրութիւն ընենք՝ կը տեսնենք որ այդ բառերը պահուած են

1. Եկեղեցիի կամ կրօնի վերաբերեալ իրերու և գաղափարներու մէջ. այս տեսակէն հարուստ են մեր թրքախօս Հայերը:

2. Առտնին բարքերու վերաբերեալ իրերու եւ գաղափարներու մէջ: Իրերու վերաբերեալ բառերը բաւական կարեւոր են եւ շատ: Իսկ գաղափարներու վերաբերեալներ՝ քիչ:

3. Արհեստական ճիւղի վերաբերեալ իրերու մէջ, զոր օր. սկերիչներ, ջուհակներ բաւական բառեր պահած են իրենց գործիքներուն վրայ:

4. Թրքերէնի վրայ ձեւուած հայերէն բառեր, զոր օր. կուս (զրամ), բլոր (զրամ, զրուշ), կլոր (նոյն) եւլն, որոնք ցրուած են թէ՛ առտնին եւ թէ՛ մանաւանդ չուկայի բացատրութիւններու մէջ:

Այս ճիւղը աղքատ է և իր բառերը աւելի փոխաբերական կամ այլարանական գործածութիւններ ունին:

5. Կան կարգ մըն ալ բառեր, որ առանց ու է ճիւղի վերաբերելու, պահուած են լեզուին մէջ, զոր օր. օրթալս = որթուտ = Sarment բառը, որ հաւասարապէս կը գործածուի հայ և թուրք բերաններու մէջ:

Աղամամուր: — Առաւօտեան եւ արշալոյսին մէջ եղած միջոցին մութը:

Ազապ. — Մշակ, ծառայ, սպասաւոր որ ընդհանրապէս ամուրի կ'ըլլային, բայց այդ պաշտօններու մէջ զանուոյններ եթէ ամուսնացեալ ալ ըլլան, զարձեալ ազապ կ'ըսուին: Այնթապ քար կրողներուն (էշերով) կը տրուի ազապ անունը « Թաշնը ազապը » կամ պարզապէս « Ազապ »:

Ախրայ, Ախուրայ. — (Ըստ հայկազեան բառգիրքի, աղսրայ [յփ. աղուրայնի]. աղուրի. ՇԱ.Ն, չըպրզ, արսրան)



որթի երկայն ճիւղը, զոր առանց կըտրելու իր արմատէն, դետինը կը փորեն եւ կը թաղեն, այնպէս որ ախլորային ծայրը դուրս մնայ այն տեղ ուր կ'ուզուէր նոր որթ մը (թէյէք) յառաջ բերել: Երկու տարուան մէջ առաջ կ'ուգայ քիյէր: Այս գործողութիւնը կ'ըսուի « ախլորայ ետթըրմագ »:

Աջ. — Աչք. հողէ շինուած փեթակներուն (որոնց մէջ կը պահուի ձմեռան պաշարը) ծակը, որ փեթակներու առջեւէն ստորին կողմը բացուած կ'ըլլայ: Ահա. — Իշթէ:

Աղբար. — Եղբայր:

Աղկեկ. — Աղէկ:

Աղվուր կամ Աղումուր. — Սանի (թէնճիրէ, գազան) յատակին վրայ մուրը կը ժողլեն, քիչ մըն ալ աղ ու սխտոր խառնելով՝ աղէկ մը կը մանրեն այս զանգուածով կ'օծեն բամպակ թել մը եւ երախաներուն ահանջը ծակելով (գինդի, օղի ծակ) կ'անցընեն այդ թելը, որ կը մնայ մինչեւ որ ծակը բռնկուի: Եւ յետոյ կ'անցընեն փոքրիկ թիթեւ գինտեր:

Աղջին, Ախնին, — Աղջիկ:

Աղսա. — Տեսակ մը հեկլա, սուփի մասն:

Աղխա, Ախխա. — Աղքատ:

Անիր. — Վարունգի ընտանիքէն. կուտերը աւելի մանր, խիտ, բարակ, ծուռ, եւ շատ երկայն՝ մատնաչափէն մինչեւ մարդաչափ կրնայ մեծնալ. գոյնը ընդհանրապէս բոնի է կամ մութ կանաչ գոյնով. որոշիչ զլխաւոր մէկ նշանն ալ ահօսաւոր կեղեւն է: Այս տեսակը կ'ըսուի խրքա աճիր, այսինքն թուրշի դնելու աճիր: Տեսակ մըն ալ կայ քիւրշի աճիր վարունգի մեծութեամբ. կեղևը ահօսաւոր չ'է, այլ մութ կանաչ գոյն ունի եւ աղուամազ (թիւյ) ունի: Այս տեսակը աւելի տոյնա շինելու կը ծառայէ:

Անգահ. — Անգոճ, անահ:

Անկուտ. — Անխելք:

Անուլիս. — Անանուլիս:

Անուհ. — Անճարակ:

Ապա. — Այլա, ապրա (քոյր իմ, քուրբիկ):

Ապուր. — Փիլիպ. — Աշ:

Առոտ. — Առաւօտ, « Առոտուն պաղա կիտէճէյիդ »:

Առնրման. — Ո՛ր եւ է նիւթի բուն առնուած գինը (սէրմայէ): — Աւելի շուկայի բառ է:

Ասուած. — Աստուած. — Բարո՛ւ (բարեւ, բարեւ ձեզ). — Ասծու բարին ողջոյնի բանաձեւը, որ առտուընէ եւ իրիկուընէ զատ ուրիշ ժամերու մէջ կ'անցնի:

Աստուան ողջոյնն է « Բարլօ՛ս ». — « Բարլօ՛ս, Ասծու բարին »: Երեկոյեան, — « Բարիբկո՛ւն » « Ասծու բարին: Բուրբ = պ արտասանելու է:

Ասաղ. — Մատաղ:

Արիւ. — Աւնա, ասնալըգ:

Բաժ. — Բան, « եօլ բանը » ճամբու տուրք, եւլն:

Բախլա. — Բակլա:

Բաղարջ. — Անխմոր փոքր նկանակներ, զոր ջաղացպանը կը պատրաստէ, կ'եփէ ջաղացքի թոնիրին մէջ եւ կը հրամցընէ հիւրին:

Բին. — (= բոյն). Հաւնոց. — « Բին է՛, բին է՛, բին է՛ ». հաւերը բինը քըշելու համար ձայնարկութիւն մը: (Բին բառը թրքերէնի օրէնքով հօլովուած է): Բիւրիւրիկ. — Բլշակն, բլշոտ աչքեր ունեցող:

Բնկալ կամ բունկալ. — Բուն, արմատ բոնելու տեղ, նիւթ. — « Բնկալլանմագ = բուն դնել, բոնել, արմատանալ, զօրանալ, շատնալ »:

Բոլուր. — Դրամ:

Բուխերի. — Ծխնելոյզ:

Բուսակ. — (= պուսակ). պսակ: « Էջի պուսակ » = առջի պսակ:

Դիզիր. — Դիզիր: Կալի ատեն գիւղին մեծին ծառայող մարդը:

Դուռնա. — Տե՛ս Ճուռուն:

Դրալ, գրկալ. — Դրակալ, գրքակալ:

Դահ, ճեհ. — Ողկոյզի այն հատիկները, որ շուտ կը թռոմին, կը կարմրին անուշ կամ թթուաշ հոյզ մը կ'ուսնենան, Ասի շատ անգամ որթի հիւանդութեան

արդիւնք է : «Դահ», «Դահ փեխեգի», «Դահնի» լատերը շատ գործածական են. վերջինը կը նշանակէ այն կիներն ու էրիկները, որ այգիին մէջ, ողկոյզները կը մաքրեն դահերէն :

Դարպաս, Տարպաս. — Առաջնորդարան, վեհարան :

Դրգալ. — Դգալ :

Դրդրափ. — Դեղթափ, փանդեհիտ :

«Դըղթափ կիպի քէստի» :

Զահքեր. — (= Ծոթոր). Ըստ Գաղղիանոսի գարդար (Տճ. Քեփլիօ օթու). thymus :

Զասիկ. — Տօն, տօնախմբութիւն. «Պէտոյիւք Զասիկ» = Տօն Յարութեան Փրկչին. — «Քիւչիւք Զասիկ» = Տօն Ծընդեան Փրկչին :

Զարգարար. — Ծաղկազարդ :

Զընունդ. — Ծնունդ (Փրկչին) :

Զըրգա. — Նիգ :

Զիվան. — Որոմ :

Էգլաս. — (= Էզլաց). Այզլաց, Աւագ ուրբաթի գիշերը : Այս մասին տե՛ս «Քիւրակն» 1898, էջ 772-774, 826-828. Էթիսի, աեթիսի. — կերակուրներուն աւրուիլը : (Աշխի) :

Էչֆ, էչուկ. — Աչք, աչիկ : «Քիշտիւի էչքիդ» = Վա՛յ քեզի, վա՛յ գլխուդ : Էթի մեղփի. — Յաւակնոտներուն վրայ անվտանգութիւն արտայայտելու ոճ մը : Էթիթիթ. — Տաք, կծու (մանկական լեզուով) :

Ըթիսն, իթիսն. — Թարմ ընծիւղներ՝ որթի եւ նմաններու վրայ :

Թար. — Վարժապետներուն գաւազանը : Թաթիկ. — Մանկիկներու ձեռքերը, կատուններուն թաթերը :

Թա՛ար, քաղար. — Թաղար. կօշկակարներուն զոյլը, որուն մէջ կաշի կը թրջեն : «Թաղար քիւլէյի». — Թաղար. մանած խաչելու աման :

Թարխանա. — (Պարսկ. Թէրխանէ) Մածունով կամ շիրայով ու կորկոտով եփուած :

Թարխըն. — Համեմի խոտ մը, որ անանուխի հետ միասին կը դնուի չորցնելու համար :

Թափքրփաճ. — Թրք. Skofiaf սաչըգ Թիլ, — Թիլ, սաղանի :

Թեքեւսօլիկ. — Թեթեւ (Ձէվզէք) :

Թեյեֆ. — Որթ. (Թրք. ֆիւրիւմ) :

Թեփիր. — Ծուրիչ, plateau, տեփուր :

Թընթեկ. — Թրք. Սիւնեփե :

Թսիսի՛յս. — Թրք. Ա՛լ սանս, ծաղրական, արհամարհական ոճ մը. «Թըսիսի՛յտ» կամ «Թսիսի՛յտ եիւզիւնէ» :

Թւեկ. — Թմբուլ, «Թմբուլ օլմուշ» = Թմբած է : (\*)

Ժամ. — Եկեղեցի :

Ժամկոս, ժամկոց. — Ժամկոչ,

ինի՛կ. — (Ձայնրկ.) Հեճուկ :

Ինիյնե. — Ի հեճուկս :

Ինգալապ. — Կնքահայր :

Իթիան. — Մեծ մարդ. «Իչխան աղալար :

Իրեսիլն. — Երէցկին :

Լակոս. — Ծան ձագ :

Լափիւրսեյ. — 1. Լափել շուտ շուտ : — 2. Թերի ընթերցում. «Օգոյամաղքի, լափիստել էտէր :

Լեկեկ, լեյեկ. — Լական. Լէկէնչէ կամ լէյէնչէ = Փոքրիկ լական :

Լեօն. — Դիր մը սապոն, օճառ. «Պիր լէօն սապլն» :

Լիվան. — Արեւելեան ճարտարապետութեան մէջ երկրորդ յարկի վրայ երեսբայ քառակուսի յարկ մը, մարմար յատակով, որ իբր մուտք (entrée) կը ծառայէ երեք տուններուն կամ սենեակներուն, որոնց դռները աջէն, ձախէն եւ ճակատէն իվանին վրայ բացուած են : (Տաճկ. Տիվան) :

Լոլիկ. — Գինով :

Լոլ. — Քարէ գլան, լողքար. (Կ՛ըսուի «Լող չեփեփ, լողարագ» :)

Լոլոսուր կամ Լոլոսուր աղանք. — Լողը քաշելու փայտէ գործիք :

Լոս. — Լոյս, լուս :

Լոս քազաւոր. — Փեսային հալաւը հազցնելու ատեն երգուած յանկերգ մը :

Լուսաղփ. — Լուսահողի :

(\*) Թմբուլ՝ քուրմ արմատէ՞ն թէ քմբիլ բայէն :



Լուսադար = Լուսադար :

հալ . — Թրք . պեկնկ , grain :

հանս . — Պանձ :

հաշա . — Մազէ , բուրդէ հիւսուած խոշոր պարկ , ալիւրի և ցորենի համար : « Ուն խաշաար » (\*) :

հաշխար . — (Պաշաքար) . քարէ խաշ անկուած տեղեր , որ կամ գերեզմաններ կ'ըլլան և կամ ուխտատեղի :

հաշըլ : — Եփ ջրով խիւսուած ալիւրի զանգուած , որ կը գործածուի մանածը պնդացնելու : Ասկէ «խաշըլճը» հինքի մասուրայ շինող կիներ :

հաշել օլմագ . — Պաշխանմագ = (խարշիլ) :

հաշլբեթի . = Պաշուիլ , գամուիլ . « Պաշլըրտեթի օլա էլլէրին » = Ձեռքերդ խաշվրտի :

հալոխ . — Պաղող :

հալխան . — Պալիանելու , փակելու , գոցելու նիւթ : Այնթապցիք խալիանով կը հասկնան միմիայն խաղողի կողովներուն և մանրաններուն բերանը գոցելու համար գործածուած կտաները . կամ որթի ճիւղերը , եւայլն :

հեւ , խեքանոս . — խենթ , յիմար , ապուշ :

հեշ . — Պաշ :

հեռնիք . — Տանիքի գերաններուն մէջ տեղ եղած միջոցները , որ կը կազմուին ճիւղ գերաններուն՝ որմին վրայ դրուած տեղերը :

հըզան . — Պածան (Շուն) :

հըքա (?) . — Թուրշու , էշկիլի (= էքշիլի) :

հըմմըսանք . — խղճմտանք , խիղճ :

հնամը . — Սնամի :

հնասլիքնեք . — Սնտալ (քթին տակէն) :

հընքըկ . — Շատ խնտացող , խնտուկ :

հեւլա . — Բամպակենիի բոժոժներ , խողակներ :

հըքեկ . — Անութի տակ դրուած երկու կտորներ կերպասէ :

(\*) Այս եւ ուրիշ քանի մը բառեր յայտնի է որ բուն հայ բառեր չեն :

հըպըլիկ . — Երբ խմորուածով ո եւ է նիւթ առատանայ կ'ըսուի « իչինէ խըպըլիկ տիւլմիւշ » :

հըքկ , գըքըգ . — Գընըգ , խողտեթ , խողտում :

հոեորիկ . — Ձաւարին (պուլղուր) խոշորը , որ մաղին երեսը կը մնայ :

հուբում . — խթում . — Ուսկից « խըթնեթ օլմագ » = Ձատկի ճրագալոյցին հաւկիթ ուտել :

հուցկ , հուցկ . — Սունկ :

հոնկիք . — Սոտով , լազտի չոր ջաշով լեցուած բարձ , բաղմոց (խոնկուր) :

հօզակ . — Սողակ :

հօշիկ . — Թեթեւ թեթեւօլիկ : = Թեթեւ թեթեւ կամ թեթեւօրէն խնդալ :

հասաղ . — Դագաղ , ( Թրք . թափուտ ) :

հազորիկ , կեզիրիկ . — Կայծուղիկ , փոքրիկ կարմիր պալարներ , որ մարմնի վրայ կ'ելլեն :

հաքալոս . — Կաթողիկոս :

համուկ . — (= Կամացուկ) , վարպետորդի , « Կամուկ սատանայ » :

հաղանոս . — Կաղանտ :

հապոց . — Ծրարիկ բամպակի մանելու համար պատրաստուած բամպակէ պիտիկներու (= պատրոյգ) ծնարը , կապոցը :

հարսաւող . — Կարգացող :

հարիկ . — (= Գարիկ) . Արփածըղ :

հեզման . — Գերեզման , գերեզմանատուն :

հեմ . — Կամն , կամնասայլ :

հեռնեկ . — Կոճակ , Այն եղէգնիկը կամ ոսկորը , որով ջուհակներ չուանը հենքին (= առէջքին) կը կոճկեն պրկելու համար ու չուանը ցիցի կը կապեն :

հեռնէշ . — (= կանաչ) անուշադրէ , աղէ և խրստ րաշրեք բաղադրութիւն մը ոսկերիչներու համար :

հեռն . — (= կոն) Սախիյեկն ,

հեկեպի . — Կրօնքով կէս քրիստոնեայ :

հես . — Թրք . Եարըմ . կէսե կէս = կէս առ կէս :

հեսխում . — Կերուխում , :

հըզկապ . — (= կոյզկապ) , Ողկոյզին կոթը :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ի Փ

Նոր Զուղայ, Ե. Վ. Ե. — Կարդացէք թիւ 34, Նամակատուփ :

Պուրկազ, Մ. Ք. — Դրկեցինք. — երեք ամիսէն առաջ չ'աւարտիր :

Սկասերինոդար, Դ. Ա. — Նոր Դըպրոցի բաժանորդագինն է 25 ղրուշ (2 բուպլի) կանխիկ : Զեր հաշիւը վճարուեցաւ Տրապիզոնէն :

Եղեօիա, Ս. Յ. Գ. — Գանձեցինք :

Կեսարիա, Տ. Եպ. — Այո՛ : Նոր Դըպրոցը ղրկեցինք, միւսը հոս չկայ :

Մարաշ, Յ. Վ. — Վրիպակները հասկընալի են, նորէն տպել աւելորդ է : 50 օրինակ ղրկեցինք. փոխարժէքը 210 ղրուշ անյապազ ղրկեցէք :

Գաղաթիա, Ս. Մ. — Զենք կրնար :

Խարբերդ, Ս. Շ. — Նմոյշ թիւերը ղրկեցինք, բայց չենք շարունակեր, քանի որ տարեգինը չէք ղրկած. մեր դորձառնութիւնները կանխիկ են. = Տ. Լ. Թող վճարէ ծախքերը և իրեն կը յանձնենք գրքին անկազմ թերթերը. պայմաններն ալ թող իմացնէ :

Ֆիլիպէ, Վ. Մ. — Յայտագիրը ղրկեցինք. ամբողջին արժէքն է 60 ղրուշ կանխիկ :

Եօզրաս, Ե. Շ. — Դեռ նպաստաւոր պատասխան չենք կրնար տալ :

Ն Ո Ր Դ Պ Ր Ո Յ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

1. Տարեկանը պիտի բաղկանայ 10 պրակէ :

(Ամէն մէկ պրակ պիտի ըլլայ 5—6 տպագրական թերթ, 16 էջով) :

2. Մէկ օրինակի (կամ 10 պրակի) բաժանորդագինն է 20 ղշ. Պոլսոյ համար : 25 ղրուշ գաւառներու համար :

ղրու համար :

3. Գաւառները ղրկուած պրակներուն փոթի ծախքը մեր վրայ է :

4. Տասը օրինակի բաժանորդ գըրւողը մէկ օրինակ նուէր պիտի ստանայ :

5. Մէկ պրակի գինն է 3 ղրուշ .

6. Պրակ առ պրակ գնողին գեղջ չկայ :

Հասցէ

Ս . Դ Ա Ի Թ Ե Ա Ն

Խօրասաննի Խան, Սիրէքնի

Կ . ՊՈԼԻՍ

« ՆՈՐ ԴՊՐՈՅ » Ի

ՅԱՌԱՋԱԲԱՆԸ

Այս թիւով կուտանք « Նոր Դըպրոց » ի Յառաջարանը որպէս ղի « Բիւրակն » ի բաժանորդները առաջին պրակըն ունենան ամբողջովին :

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

Հասկաբաղ	
Ամենէն աւելի ի՞նչ կը պակսի .	Ս. Դ.
Ժողովրդ. Բանահիւս.	
ձգնաւորներու մատուռը	Վ. Ը.
Ազգագրական	
Կէտիկի նախապաշարումներ	Կ. Գ.
Կենսագրական	
Դրիգոր Զոհրասպ	Յ. Ա.
Բանասիրական	
Աղերսանդրիոյ ղպրոցը	Դ. Խ.
Կրթական	
Նոր Դըպրոցի նպատակը եւ ուղղութիւնը	Ս. Դ.
Լեզուաբանական	
Այնթապի գաւառաբարբառը	Բ. Վ.
Նամակատուփ, Ազգեր, Ելն.	

Արտօճատէր. — Հ. Ս. Խ. ԻԻԹԻԻՃԵԱՆ

ՏՊԱԳՐ. Ն. Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ